ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի «Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի «Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցում սովորող երեխաներին դրամական աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակներում «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ին

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴԱՏՊ - Ծ1141.Մ12001/25-6

ք. Երևան «29»«հունվարի» 2025թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն, ի դեմս կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լ. Աբրահամյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված չափաքանակից՝ մինչև 5,400,000 (հինգ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ Կատարողը՝ պարտավորվում է տրամադրել կազմակերպությունում խնամվող դպրոցահասակ երեխաներին անձնական մանր ծախսեր կատարելու համար գումար (այսուհետ Ծառայություն)՝ սույն պայմանգրի անբաժանելի մասեր կազմող N1 հավելվածով նախատեսված նկարագրին, N 2 հավելվածով սահմանված ցուցանիշներին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցված Ծառայության ընթացքը և համապատասխանությունը սույն պայմանագրի հավելված 1-ով նախատեսված նկարագրին՝ առանց միջամտելու Կատարողի բնականոն գործունեությանը.

2.1.2. Առանց Ծառայության արդյունքի դիմաց վճարելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված նկարագրի պահանջներին:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Ընդունել սույն պայմանագրի հավելված 1-ով նախատեսված նկարագրին համապատասխան Կատարողի մատուցված Ծառայության արդյունքը և Կատարողին փոխհատուցել վերջինիս տրամադրման ենթակա աջակցության գումարները.

2.2.2 Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին գրավոր հայտնել Կատարողին.

2.2.3. Ընդունել Կատարողի կողմից ներկայացված մատուցված Ծառայության դիմաց փոխհատուցման ենթակա դրամական միջոցների վճարման հայտ-պահանջագիրը, համաձայն սույն պայմանագրի հավելված 3-ի և ստանալուց հետո 10 բանկային օրվա ընթացքում ապահովել դրա վճարումը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել փոխհատուցելու մատուցած Ծառայության համարժեք գումարը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Ապահովել Ծառայության մատուցումը սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված նկարագրին, N 2 հավելվածով սահմանված ցուցանիշներին համապատասխան.

2.4.2. Պատվիրատուին ներկայացնել՝ հայտ պահանջագիր համաձայն հավելված 3-ի:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Կատարողը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 17-ը Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության հանձնման-ընդունման ակտի երկուական օրինակ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 4-ի:

3.2. Պատվիրատուն՝ հանձնման-ընդունման ակտը ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված և կնքված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը ներկայացնում է Կատարողին, իսկ չստորագրման դեպքում՝ դրա պատճառաբանված մերժումը:

3.3. Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառման արդյունքը գնահատվում է Նախարարության պատասխանատու ստորաբաժանման կողմից: Միջոցառումների իրականացման 75% և ավել արդյունքի դեպքում պատասխանատու ստորաբաժանումը տալիս է դրական եզրակացություն՝ համաձայն N 5 հավելվածի: 75%-ից ցածր արդյունքի դեպքում, սույն պայմանագիրը ենթակա է վերանայման:

3.4. Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում սույն պայմանագրի N 4 հավելվածով սահմանված հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրելու և կնքելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրի տարեկան գինը կազմում է մինչև 5,400,000 (հինգ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը և ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների պետք է համապատասխանի սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 2-ով սահմանված սահմանային չափաքանակներին:

4.2 Պայմանագրի գինն իր մեջ ներառում է.

4.2.1 Կազմակերպությունում խնամվող 6-9 տարեկան երեխաներին գրպանի ծախսերի համար գումարի տրամադրման նպատակով նախատեսված նպաստը՝ մեկ երեխայի հաշվարկով մեկ ամսվա գրպանի ծախսերի համար նախատեսված գումարը կազմում է 6000 (վեց հազար) ՀՀ դրամ:

4.2.2 Կազմակերպությունում խնամվող 10-15 տարեկան երեխաներին գրպանի ծախսերի համար գումարի տրամադրման նպատակով նախատեսված նպաստը՝ մեկ երեխայի հաշվարկով մեկ ամսվա գրպանի ծախսերի համար նախատեսված գումարը կազմում է 12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ:

4.2.3 Կազմակերպությունում խնամվող 16-18 տարեկան երեխաներին գրպանի ծախսերի համար գումարի տրամադրման նպատակով նախատեսված նպաստը՝ մեկ երեխայի հաշվարկով մեկ ամսվա գրպանի ծախսերի համար նախատեսված գումարը կազմում է 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ:

4.3. Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

4.4. Պատվիրատուն՝ Կատարողի կողմից մատուցած փաստացի Ծառայության դիմաց փոխհատուցում է անկանխիկ՝ իր գանձապետական հաշվից գումարը Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրին կից N 4 հավելվածով սահմանված Հանձնման-ընդունման երկկողմանի ստորագրված ակտի հիման վրա, սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ցուցանիշներով նախատեսված միջոցների սահմաններում, բայց ոչ ավելի, քան տվյալ ժամանակահատվածի (տարեսկզբից աճողական) համար նախատեսված գումարի չափից: Տվյալ ժամանակահատվածում փաստացի մատուցված Ծառայության դիմաց վճարվելիք գումարի չափը սույն պայմանագրի N2 հավելվածի ցուցանիշներով սահմանված գումարին գերազանցելու դեպքում, վճարումն իրականացվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ցուցանիշներով նախատեսված գումարների չափով, իսկ փաստացի մատուցված Ծառայության դիմաց պակաս վճարված գումարի վճարումն իրականացվում է այն ժամանակահատվածում, որում այն նախատեսված է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցված Ծառայության որակի և սույն պայմանագրի կից N 1 հավելվածով սահմանված նկարագրի պահանջների, N 2 հավելվածով սահմանված ցուցանիշների ապահովման համար:

5.2. Սույն պայմանագրով կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի. ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից և գործում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

7.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց կողմերի գրավոր համաձայնության:

7.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր (համաձայնագրեր) կնքելու միջոցով, որը (որոնք) կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը (մասերը).

7.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.

7.5. Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն

պայմանագրի NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածները բաղկացած են 6 էջից և համարվում են պայմանագրի անբաժանելի մասերը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ ք. Գյումրի, Անանիա Շիրակացու 10 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011216372 ՀՎՀՀ 01506515	ՀՀ 900218000884 ՀՎՀՀ 05552136
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝
Ս. Մուրադյան (ստորագրություն)	Լ. Աբրահամյան (ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

N1 Հավել
202__թ.« »« » կնք
N ԴԱՏՊ- Ծ1141.Մ12001/25-6 պայման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարմ մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագ չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 1324-Ն որոշմամբ հաստատված VIII չափորոշիչի համաձ «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը ճգնաժամային բաղադրի խնամվող ուսումնական հաստատությունում սովորող և միաժամանակ ուսումնական հաստատութ հաճախող երեխաներին ապահովում է անձնական մանր ծախսեր կատարելու համար անհրաժեշտ գումա (տարիքային բաշխվածությունն ըստ ամիսների կցվում է), սովորեցնում է խելամիտ և արդյունա օգտագործել ունեցած գումարը, այդ թվում՝

1. 6-9 տարեկան երեխաներին տրվում է ամսական 6 հազ. դրամ,
2. 10-15 տարեկան երեխաներին տրվում է ամսական 12 հազ. դրամ,
3. 16-18 տարեկան երեխաներին տրվում է ամսական 15 հազ. դրամ:

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա ժամկետ ը	պահանջ ող գումա
1.	«Երեխաների աջակցության կենտրոնների ճգնաժամային բաղադրիչում խնամվող ուսումնական հաստատությունում սովորող և միաժամանակ ուսումնական հաստատություն հաճախող երեխաներին դրամական աջակցության տրամադրում» միջոցառում	ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 1324-Ն որոշման համաձայն պետական մանկատներում և երեխաների և ընտանիքի աջակցության կենտրոնների ճգնաժամային բաղադրիչում խնամվող երեխայի անձնական մանր ծախսերի համար նախատեսված գումարը	Համաձայն ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 1324-Ն որոշմամբ հաստատված VIII չափորոշիչի «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ 1. Ճգնաժամային բաղադրիչում խնամվող ուսումնական հաստատությունում	1. Երեխաներին անձնական մանր ծախսեր կատարելու համար անհրաժեշտ գումարը տրամադրվում է ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 1324-Ն որոշման: 2. Վերոնշյալ որոշման համաձայն մանկատանը խնամվող երեխայի անձնական մանր ծախսերի համար նախատեսված գումարը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության	2025 թվական ի դեկտեմ բերի 31	Սույն պայման որով նախատ ված և միջոցնե շրջանա երում

		տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:	սովորող և միաժամանակ ուսումնական հաստատություն հաճախող ***50*** երեխաներին ապահովում է անձնական մանր ծախսեր կատարելու համար անհրաժեշտ գումարով՝ 6-9, 10-15, 16-18 տարեկան տարիքային բաշխվածությամբ: 2.Կենտրոնի համապատասխան մասնագետները անձնական մանր ծախսերի համար գումար ստացող երեխաներին սովորեցնում են օգտվել տրամադրված բանկային քարտերից, խելամիտ և արդյունավետ օգտագործել նրանց տրված գումարը:	պետական բյուջեի միջոցների հաշվին: 3. Մանկատանը խնամվող գրպանի մանր ծախսերի համար գումար ստացող դպրոցահասակ երեխաների իրավունքների իրացման համար ստեղծվել են նպաստավոր պայմաններ, 4. Երեխաները լիարժեք սոցիալականացվել են 5. Ապահովվել է նրանց կարիքները և պահանջմունքները բավարարելու հնարավորություն 6. Երեխաները ձեռք են բերել հմտություններ տրամադրված բանկային քարտերից օգտվելու վերաբերյալ:		

*Նշված բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է ՀՀ աշխատանքի սոցիալական հարցերի նախարարի 2016թ. հունիսի 22-ի N 69-Ա/1 հրամանի 2.10 կետին և նույն հրամանի հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության, ինչպես նաև նախարարության կող իրականացված մշտադիտարկման արդյունքների վերլուծության հիման վրա, որոնք հիմք են հանդիսան Կազմակերպության տնօրենի աշխատանքը գնահատելու, ինչպես նաև Կազմակերպության որակակ ցուցանիշների կատարողական արդյունքների հետագա բարելավման համար:

Կազմակերպության տնօրենի աշխատանքը գնահատվում է բավարար, եթե վերը նշված արդյունքա բոլոր ցուցանիշները, ըստ ներկայացված եռամսյակային հաշվետվության, կատարվել են նվազագույնը 75%-

Նախարարություն՝	**Կազմակերպություն՝**
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝
_____ Ա.Մուրադյան (ստորագրություն)	_____ Լ. Աբրահամյան (ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

N2 Հավելված
202__թ.« »« » կնքված
N ԴԱՏՊ- Ծ1141.Մ12001/25-6 պայմանագրի

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի «Երեխաների հիմնահարցեր» ծրագրի «Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցում սովորող երեխաներին դրամական աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակներում նախատեսված դրամական միջոցների աջակցության նպատակով «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ին նպաստի տրամադրման համար սահմանվող

1	6-9 տարեկան մեկ խնամվողի հաշվարկով դրամական աջակցության մեկ ամսվա գինը	6.0	հազար դրամ
2	10-15 տարեկան մեկ խնամվողի հաշվարկով դրամական աջակցության մեկ ամսվա գինը	12.0	հազար դրամ
3	16-18 տարեկան մեկ խնամվողի հաշվարկով դրամական աջակցության մեկ ամսվա գինը	15.0	հազար դրամ
4	Տրամադրվող նպաստի առավելագույն չափը	5400.0	հազար դրամ

հազար դրամ

Հ/Հ	Ամիս	Ընդամենը	
		խնամվողների ամսական թվաքանակը	գումարը /հազար դրամ/
1	հունվար	50	1350.0
2	փետրվար	50	1350.0
3	մարտ	50	1350.0
4	ապրիլ	50	2700.0
5	մայիս	50	2700.0
6	հունիս	50	2700.0
7	հուլիս	50	4050.0
8	օգոստոս	50	4050.0
9	սեպտեմբեր	50	4050.0
10	հոկտեմբեր	50	5400.0
11	նոյեմբեր	50	5400.0
12	դեկտեմբեր	50	5400.0
	ընդամենը	50	5400.0

Պատվիրատու

Նախարարության գլխավոր քարտուղար՝

Ս. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կատարող

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝

Լ. Աբրահամյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
202__թ.« »« » կնքված
N ԴԱՏՊ- Ծ1141.Մ12001/25-6 պայմանագրի

ՀԱՅՏ-ՊԱՀԱՆՋԱԳԻՐ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի «Երեխաների հիմնահարցեր» ծրագրի «Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցում սովորող երեխաներին դրամական աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակներում դրամական աջակցության նպատակով «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից _____ամսում մատուցված նպաստի փոխհատուցման ենթակա միջոցների

հազար դրամ

Հ/Հ	Ցուցանիշների անվանումը	Չափի միավորը	քանակը (գումարը)
1	6-9 տարեկան խնամվողների դպրոցահասակ երեխաների ամսական թվաքանակը	խնամվող	
1.1	Մեկ խնամվողի հաշվով դրամական աջակցությկան մեկ ամսվա գումարը	հազար դրամ	
1.2	Հաշվետու ժամանակաշրջանում դրամական աջակցության փոխհատուցման ենթակա գումարը	հազար դրամ	**0.0**
2	10-15 տարեկան խնամվող դպրոցահասակ երեխաների ամսական թվաքանակը	խնամվող	
2.1	Մեկ խնամվողի հաշվով դրամական աջակցությկան մեկ ամսվա գինը	հազար դրամ	
2.2	Հաշվետու ժամանակաշրջանում դրամական աջակցության փոխհատուցման ենթակա գումարը	հազար դրամ	**0.0**
3	16-18 տարեկան խնամվող դպրոցահասակ երեխաների ամսական թվաքանակը	խնամվող	
3.1	Մեկ խնամվողի հաշվով դրամական աջակցությկան մեկ ամսվա գինը	հազար դրամ	
3.2	Հաշվետու ժամանակաշրջանում դրամական աջակցության փոխհատուցման ենթակա գումարը	հազար դրամ	**0.0**
	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում փոխհատուցման ենթակա գումարը	հազար դրամ	**0.0**

Ծառայությունը հանձնեց՝

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Լ. Աբրահամյան

ստորագրությունը անունը, ազգանունը

« »« » 20__թ.

N 4 Հավելված
202__թ. «___» «_____» կնքված
N ԴԱՏՊ – Ծ1141.Մ12001/25-6 պայմանագրի

Նախարարություն՝

Կազմակերպություն

հասցե՝

հ/հ
հվհհ

հասցե՝

հ/հ
հվհհ

ԱԿՏ
Հանձնման-ընդունման

« »« » 202__թ.
Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝

Նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար , և Կազմակերպությունն՝ ի դեմս Կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավոր կատարող , հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման վերաբերյալ, պատասխանատու ստորաբաժանման « »« » 202__թ. N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Միջոցառումների իրականացումը համապատասխանում է պայմանագրով նախատեսված Միջոցառումներին և տրամադրման ժամանակացույցին՝ կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը « »« » 202__թ–ից « »« » 202__թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Միջոցառումները.

Համառոտ նկարագիրը	*Քանակը*	*Մեկ միավորի համար տրամադրվող դրամական աջակցության չափը (դրամ)*	*Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)*	*Վճարման վերջնաժամկետը ամիս, ամսաթիվը*
1	2	3	4	5
Դպրոցական երեխաներին դրամական աջակցության տրամադրում	x	x	x	x
6-9 տարեկան			0.0	
10-15 տարեկան			0.0	
16-18 տարեկան			0.0	
Ընդամենը	x	x	0.0	

Ընդունեց՝

/ստորագրություն/ ազգանուն

Կ.Տ

Հանձնեց՝

/ստորագրություն/ ազգանուն

N 5 Հավելված
202__ թ.«___» «_____» կնքված
N ԴԱՏՊ – Ծ1141.Մ12001/25-6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N __
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

« » « » 202__թ.

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 202__թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուի անվանումը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Կատարողի անվանումը՝
Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում Կատարողը « » « » 202__թ.-ից « » « » 202__թ.-ը ընկած ժամանակահատվածում իրականացվել է հետևյալ ծառայությունները.

ՀՀ	Մատուցված ծառայությունների					
	Անվանումը	Տեխնիկական բնութագրերի համառոտ շարադրանքը	Քանակական բնութագիրը		Կատարման ժամկետը	
			Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի
1	Դրամական աջակցության տրամադրում	Դրամական աջակցության տրամադրում 6-9 տարեկան երեխաներին				
2	Դրամական աջակցության տրամադրում	Դրամական աջակցության տրամադրում 10-15 տարեկան երեխաներին				
3	Դրամական աջակցության տրամադրում	Դրամական աջակցության տրամադրում 16-18 տարեկան երեխաներին				

Նշումներ անհամապատասխանությունների մասին ՝

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն
/Դրական/բացասական/

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

_____ վարչության պետ